ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԿԿ-ԳՀԾՁԲ-22/24

ք. Երևան «18» 02 2022թ.

Կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Մ. Խաչատրյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սեկոնետ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Մելիքյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է անվտանգության սարքերի տեղադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող

աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 23220000 (քսաներեք միլիոն երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

• ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագրի հաշվառման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կադաստրի կոմիտե ք. Երևան, Արշակունյաց 7 ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն Հ/Հ 900011030815 ՀՎՀՀ 02534328 Գլխավոր քարտուղար ---------- Մ. Խաչատրյան Կ.Տ.	«Սեկոնետ»ՍՊԸ ք. Երևան, Ն. Զարյան 32 «Հայբիզնեսբանկ»ՓԲԸ Հ/Հ 1150004088520100 ՀՎՀՀ 00099207 տնօրեն ---------- Տ. Մելիքյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
ԿԿ-ԳՀԾՁԲ-22/24 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխ. բնութագիրը	չափման միավորը	Ընդհ. գինը/ՀՀ դրամ	Ընդհ. քանակը	հասցեն	Ժամկետը**
1	45231215/501		դրամ		1	Հասցեները ներկայացված են ստորև	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագրի հաշվառման պահից սկսած 21-րդ օրը

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Տեսագրող սարք 16 մուտք, 5/8MP մեգապիքսել HDTVI / HDCVI / AHD / CVBS BNC (1.0Vp-p, 75 Ω) վիդեո ստանդարտ, մինչև 8 հատ ցանցային տեսախցիկների միացման հնարավորություն,2-sata մինչև 6TB, 16 աուդիո աջակցություն վիդեոսեղմում H.265+PRO / H.265 / H.264+ / H.264,աուդիոսեղմում G.711u, վիդեոելք HDMI/VGA/CVBS, աուդիոելք 1- RCA (2.0 Vp-p, 1 kΩ), ցանցային հնարավորություն TCP/IP, PPPoE, DHCP, DNS, DDNS, NTP, SADP, NFS, iSCSI, UPnP™, HTTPS, ONVIF, Չափսերը: 380 × 320 × 48 mm
1, RJ45 10M/100M, սնուցումը՝ 12Վ. – քանակը 2 (հատ)
2. Տեսագրող սարք 8 մուտք, 5/8MP մեգապիքսել HDTVI / HDCVI / AHD / CVBS BNC (1.0Vp-p, 75 Ω) վիդեո ստանդարտ, մինչև 8mp 4 հատ ցանցային տեսախցիկների միացման հնարավորություն,1-sata մինչև 6TB, 8 աուդիո աջակցություն վիդեոսեղմում H.265+PRO / H.265 / H.264+ / H.264,աուդիոսեղմում G.711u, վիդեոելք HDMI/VGA, աուդիոելք 1- RCA (2.0 Vp-p, 1 kΩ), ցանցային հնարավորություն TCP/IP,

PPPoE, DHCP, DNS, DDNS, NTP, SADP, NFS, iSCSI, UPnP™, HTTPS, ONVIF, Չափերը: 200 × 200 × 45 mm
1, RJ45 10M/100M, սնուցումը՝ 12Վ. – քանակը 21 (հատ)
3. Տեսագրող սարք 4 մուտք, 5/8MP մեգապիքսել HDTVI / HDCVI / AHD / CVBS BNC (1.0Vp-p, 75 Ω) վիդեո ստանդարտ, մինչև 6mp 2 հատ ցանցային տեսախցիկների միացման հնարավորություն,1-sata մինչև 6TB,4աուդիո աջակցություն վիդեոսեղմում H.265+PRO / H.265 / H.264+ / H.264,աուդիոսեղմում G.711u, վիդեոելք HDMI/VGA, աուդիոելք 1- RCA (2.0 Vp-p, 1 kΩ), ցանցային հնարավորություն TCP/IP, PPPoE, DHCP, DNS, DDNS, NTP, SADP, NFS, iSCSI, UPnP™, HTTPS, ONVIF, Չափերը: 200 × 200 × 45 mm
1, RJ45 10M/100M, սնուցումը՝ 12Վ. – քանակը 10 (հատ)
4. Կոշտ սկավառակ 24/7
տեսագրման համար 4TB/64MB(6Gb/s NCQ)/5900RPM/SATA3 - քանակը 2 (հատ)
5. Կոշտ սկավառակ 24/7
տեսագրման համար 2TB/64MB(6Gb/s NCQ)/5900RPM/SATA3 - քանակը 21(հատ)
6. Կոշտ սկավառակ 24/7
տեսագրման համար 1TB/64MB(6Gb/s NCQ)/5900RPM/SATA3 - քանակը 10 (հատ)
7. Տեսախցիկ ներքին գմբեթային 5MP մեգապիքսել (1.0 Vp-p, 75Ом). CMOS.PAL:5MP@20fps 2560(H)×1944(V)պատկեր. աուդիո աջակցություն. Ինֆրակարմիր լուսավորություն մինչև 20մ. EXIR2.0 աշխատանքային ջերմաստիճանը -20 °C...+45°C,ոսպնյակ2,8մմ,պաշտպանվածությունը IP66, Լուսազգայնություն 0.01 Lux @ (F1.2,AGC ON),0 Lux with IR, ամրակ M12, սնուցումը՝ 12Վ. Չափերը: Φ 84.6 mm × 78.9 mm. Ելքը TVI/AHD/CVI/CVBS – քանակը 163(հատ)
8. Տեսախցիկ արտաքին գլանաձև 5MP մեգապիքսել (1.0 Vp-p, 75Ом). CMOS. PAL: 5MP@20fps 2560(H)×1944(V)պատկեր Ինֆրակարմիր լուսավորություն մինչև 40մ. EXIR2.0 աուդիո աջակցություն աշխատանքային ջերմաստիճանը-40 °C...+60 °C,ոսպնյակ 3.6 մմ, , պաշտպանվածությունը IP67,Լուսազգայնություն 0.01 Lux @ (F1.2,AGC ON),0 Lux with IR, ամրակ M12, սնուցումը՝ 12Վ. Չափերը: 78.9 mm × 75.4 mm × 216.6 mm. Ելքը TVI/AHD/CVI/CVBS – քանակը 22(հատ)
9. Սնուցման սարք 12վ 10Ա, աշխատանքային դիապազոն 170-240վ, պաշտպանություն կարճ միացումից եւ ծանրաբեռնվածությունից, պաշտպանվածությունը IP66, 3 կՎ մեկուսիչ հզորություն, լուսադիոտային ցուցիչ. Չափերը: 160x99x37 - քանակը 23(հատ)
10. Սնուցման սարք 12վ 5Ա, աշխատանքային դիապազոն 100-240վ, պաշտպանություն կարճ միացումից եւ ծանրաբեռնվածությունից, պաշտպանվածությունը IP66, 3 կՎ մեկուսիչ հզորություն, լուսադիոտային ցուցիչ. Չափերը: 160x99x37 - քանակը 10 (հատ)
11. Կոաքսիալ մալուխ D=5.7մմ.2x0.35ք,մմ, ГОСТ 15150-69, աշխատանքային ջերմաստիճանը -40...+70, հաճախականության ստանդարտ РК 75-2-111,ռադիոալիքային դիմադրություն 75 ± 5 Ом, - 1մ օդային թռիչք ունեցող հատվածներում՝ մալուխը պետք է զուգորդված լինի ամրալարով -քանակը 19500 մետր
12. Մալուխատար (պոլիվինիլ քլորիդ պինդ նյութից -15C - +66C)
Չափսը (16мм x 25мм),ինքնակպչուն ժապավենով.չիրկիզվող, քանակը 19000 մետր
13. Անխափան սնուցման սարք UPS 2000VA
220 V, 2000 VA (1200 Վտ), ներկառուցված մարտկոց 12/7Ah 2 հատ, մաքսիմալ բեռնվածության պահուստային ժամանակը - 1,5 րոպե, սառը մեկնարկ, փոփոխված սինուսային ալիք, աշխատանքային

ռեժիմների լուսային և ձայնային ցուցում: Ներկառուցված կայունացուցիչ (170 ... 270 Վ), չափսերը առանց տուփի՝ 158x198x380, քաշը 10.5 կգ: ГОСТ 14254-2015
պաշտպանություն տատանումներից, գերբեռնվածությունից: 4 ելքային միակցիչ՝ 2 հատ: IEC 320 C13 2 հատ: CEE 7/4 – քանակը 2 (հատ)
14. Անխափան սնուցման սարք UPS 1000VA
220 V, 1000 VA (600 Վտ), ներկառուցված մարտկոց 12/7Ah 2 հատ, մաքսիմալ բեռնվածության պահուստային ժամանակը - 2,5 րոպե, սառը մեկնարկ, փոփոխված սինուսային ալիք, աշխատանքային ռեժիմների լուսային և ձայնային ցուցում: Ներկառուցված կայունացուցիչ (170 ... 270 Վ), չափսերը առանց տուփի՝ 147x160x380, քաշը 7,8 կգ: ГОСТ 14254-2015
պաշտպանություն տատանումներից, գերբեռնվածությունից: 4 ելքային միակցիչ՝ 2 հատ: IEC 320 C13 2 հատ: CEE 7/4 – քանակը 31(հատ)
15. կցորդիչներ - քանակը 555(հատ)
Կոմիտաս 35/2 շենքում տեղադրված է տեսահսկման համակարգ IP տեսախցիկներով: Անհրաժեշտ է այդ համակարգին ավելացնել 2 հատ IP տեսախցիկ առնվազն հետևյալ բնութագրերին համապատասխանող.
16. Տեսախցիկ 4MP indoor/outdoor camera; H.265/H.264+/H.264; Min. Illumination: 0.01Lux (F1.2, AGC ON), 0 Lux with IR Color: 20fps(2560×1920), 25fps/30fps(2560×1440, 2048×1536, 1920×1080); 2.8mm lens; VCA functions; 3 streams; WDR; DNR; BLC; ICR; աուդիո աջակցություն. Ինֆրակարմիր լուսավորություն մինչև 30մ. EXIR2.0 աշխատանքային ջերմաստիճանը -20°C...+45°C, ոսպնյակ 2,8մմ/4մմ, պաշտպանվածությունը IP66, Լուսազգայնություն 0.01 Lux @ (F1.2,AGC ON),0 Lux with IR, ամրակ M12, սնուցումը՝ 12Վ./48վ PoE
IR distance up to 30m; IP67; DC12V&PoE, քանակը 2 հատ.
17.UTP Cat5e մալուխ -քանակը 120m
Մոնտաժային նյութեր, Տեղադրում
1. Միջին հաշվարկով տեսախցիկների տեղակայման համար անհրաժեշտ է 90-120մ իննսունից հարյուր քսան մետր մալուխ:
2. Նկարագրված աշխատանքների իրականացման ընթացքում պետք է օգտագործվի ներսի և դրսի տարածքներում օգտագործման համար նախատեսված պղնձյա UTP Cat.5e (24AWG) կամ ավելի բարձր որակավորում ունեցող մալուխ:
3. Մոնտաժ, տեղադրում և կարգաբերման աշխատանքները կատարվում են մատակարարի կողմից:
4. Գործուղման, գիշերակացի և տրանսպորտային բոլոր ծախսերը կատարվում են մատակարարի կողմից:
5. Պարտադիր պայման-մասնակցի կապի, շինարարության իրականացման լիցենզիայի առկայություն:
6. Մասնակցի կողմից առաջարկվող համակարգը պետք է ինտեգրվի արդեն գործող համակարգին:
7. Երաշխիք մեկ տարի (նաև ետերաշխիքային սպասարկում 2 տարի):
8. Սարքավորումները պետք է լինեն ոչ պակաս 2021 թ. արտադրության:
9. Մասնակիցը պետք է ունենա 3-5 տարվա նմանատիպ աշխատանքային փորձ:
10. Մասնակիը պետք է ունենա տեխնիկական համապատասխան միջոցներ և աշխատակիցների մասնագիտական որակավորում ու հմտություն:
11. Ծառայության մատուցման ժամկետը՝ պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 40 օր:

Հ/հ	Մարզ	Ստորաբաժանում	Գտնվելու վայր	Տեսախցիկների քանակը
1	Երևան	ք. Երևան, Կոմիտաս	Կոմիտաս 35/2	6հատ արտաքին, 8port

		35/2		8 հատ ներքին առանց DVR
2	Երևան	ք. Երևան, Կոմիտաս 35/2	Արաբկիր ՍԳ	14 հատ ներքին, 1հատ արտաքին, 16port
3	Երևան	ք. Երևան, Մանանդյան 33	Շենգավիթ ՍԳ	11հատ ներքին, 1հատ արտաքին 16port
4	Արագածոտն	ք. Աշտարակ, Ն.Աշտարակեցու 4	Աշտարակ ՍԳ	4հատ ներքին, 1հատ արտաքին, 8port
5	Արագածոտն	ք. Թալին, Տերյան փող. 24 թիվ 49	Թալին ՍԳ	4հատ ներքին, 1հատ արտաքին, 8port
6	Արագածոտն	ք. Ապարան, Բաղրամյան 26	Ապարան ՍԳ	3հատ ներքին, 4port
7	Արարատ	ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ 4	Մասիս ՍԳ	4հատ ներքին , 4port
8	Արարատ	ք. Արտաշատ, Մարքսի 7/30	Արտաշատ ՍԳ	4հատ ներքին, 1հատ արտաքին, 8port
9	Արարատ	ք. Վեդի	Վեդի	5հատ ներքին, 8port
10	Արմավիր	ք. Արմավիր, Հանրապետության 28	Արմավիր ՍԳ	5հատ ներքին, 8port
11	Արմավիր	ք. Վաղարշապատ, Կոմիտասի հրապարակ	Վաղարշապատ ՍԳ	7հատ ներքին, 8port
12	Գեղարքունիք	ք. Ճամբարակ, Գ. Նժդեհի 1	Ճամբարակ ՍԳ	3հատ ներքին, 4port
13	Գեղարքունիք	ք. Վարդենիս, Ռոմանի 98/2	Վարդենիս ՍԳ	4հատ ներքին, 4port
14	Գեղարքունիք	ք. Սևան, Նաիրյան 163	Սևան ՍԳ	4հատ ներքին, 4port
15	Գեղարքունիք	ք. Մարտունի, Գ.Նժդեհի 3	Մարտունի ՍԳ	4հատ ներքին, 4port
16	Գեղարքունիք	ք. Գավառ, Բունիաթյան 2	Գավառ ՍԳ	4հատ ներքին, 1հատ արտաքին 8port
17	Կոտայք	ք. Աբովյան, Բարեկամության 2	Աբովյան ՍԳ	5հատ ներքին , 8port
18	Կոտայք	ք. Հրազդան,Կենտրոն թաղամաս 52/2	Հրազդան ՍԳ	4հատ ներքին, 1հատ արտաքին , 8port
19	Կոտայք	ք. Եղվարդ, Երևանյան 1	Եղվարդ ՍԳ	5հատ ներքին, 8port
20	Կոտայք	ք. Չարենցավան, Քոչարի փ. 3-րդ փակուղի 1	Չարենցավան ՍԳ	4հատ ներքին, 1հատ արտաքին,8port

21	Շիրակ	ք. Գյումրի	Շիրակի մարզային ստորաբաժանում	6հատ ներքին որից 1-ը ձայնով, 2հատ արտաքին, 8port
22	Շիրակ	ք. Արթիկ	Արթիկ ՍԳ	4հատ ներքին, 1հատ արտաքին, 8port
23	Լոռի	ք. Ստեփանավան, Արևելյան 4	Ստեփանավան ՍԳ	4հատ ներքին, 1հատ արտաքին, 8port
24	Լոռի	ք. Սպիտակ, Շահումյան 7	Սպիտակ ՍԳ	4հատ ներքին, 4port
25	Լոռի	ք. Ալավերդի, Թումանյան 2	Ալավերդի ՍԳ	6հատ ներքին, 8port
26	Տավուշ	ք. Բերդ, Լևոն Բեկի 5	Բերդ ՍԳ	6հատ ներքին, 8port
27	Տավուշ	ք. Դիլիջան, Մյասնիկյան 66	Դիլիջան ՍԳ	4հատ ներքին, 4port
28	Տավուշ	ք. Նոյեմբերյան, Զ. Անդրանիկի 14/3	Նոյեմբերյան ՍԳ	4հատ ներքին, 1հատ արտաքին, 8port
29	Վայոց ձոր	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Եղեգնաձոր ՍԳ	4հատ ներքին, 1հատ արտաքին, 8port
30	Վայոց ձոր	ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8	Ջերմուկ ՍԳ	4հատ ներքին, 4port
31	Սյունիք	ք. Գորիս, Գ. Նժդեհի 22	Գորիս ՍԳ	4հատ ներքին, 1հատ արտաքին 8port
32	Սյունիք	ք. Սիսիան, Սիսակյան 3	Սիսիան ՍԳ	6հատ ներքին, 1հատ արտաքին, 8port
33	Սյունիք	ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2	Մեղրի ՍԳ	4հատ ներքին, 4port
34	Սյունիք	ք. Կապան, Լեռնագործների 5ա/16	Կապան ՍԳ	Ավելացում 1 հատ ներքին առանց DVR

Ցանցային տեսախցիկ առնվազն 4MP indoor/outdoor - 2 հատ
Կոմիտաս 35/2 շենքում տեղադրված է սեսահսկման Hikvision (DS-7108NI-Q1 /8P/M) համակարգ IP տեսախցիկներով:
Անհրաժեշտ է այդ համակարգին ավելացնել 2 հատ IP տեսախցիկ առնվազն հետևյալ բնութագրերին համապատասխանող.
առնվազն 4MP indoor/outdoor - 2 հատ: camera; H.265/H.264+/H.264; Min. Illumination: 0.01Lux (F1.2, AGC ON) ,0 Lux with IR Color: 20fps(2560×1920),
25fps/30fps(2560×1440, 2048×1536, 1920×1080); 2.8mm lens; VCA functions; 3 streams; WDR; DNR; BLC; ICR;
IR distance up to 30m; IP67; DC12V&PoE, 2 հատ.
UTP մալուխ ներքին 90-120m
***Ժամկետի խախտման դեպքում պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել:**

***Անհրաժեշտ ապրանքատեսակները և նյութերը տրամադրվում են կատարողի կողմից, որոնք պետք է ունենան երաշխիքային 1 տարի ժամկետ:**
***Գործելու է ետերաշխիքային սպասարկում՝ 1 տարի ժամկետով:**
***Տեղադրման ժամանակ պատվիրատուի կողմից կտրամադրվի սխեմա կատարվելիք ծառայությունների կատարման համար անհրաժեշտ տեղադիրքի վերաբերյալ:**

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	**ավարտը**
Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագրի հաշվառման պահից	21-րդ օրը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ		ԿԱՏԱՐՈՂ
Կադաստրի կոմիտե ք. Երևան, Արշակունյաց 7 ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն Հ/Հ 900011030815 ՀՎՀՀ 02534328 Գլխավոր քարտուղար ---------- Ս. Խաչատրյան Կ.Տ		«Սեկոնետ»ՍՊԸ ք. Երևան, Ն. Զարյան 32 «Հայբիզնեսբանկ»ՓԲԸ Հ/Հ 1150004088520100 ՀՎՀՀ 00099207 տնօրեն ---------- Տ. Մելիքյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 2
ԿԿ-ԳՀԾՁԲ-22/24 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____ _____ գտնվելու վայրը _____ հհ _____ հվհհ _____	_____ _____ գտնվելու վայրը _____ հհ_____ հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____ ստորագրություն	_____ ստորագրություն
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
ԿԿ-ԳՀԾՁԲ-22/24 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը
Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
_____ ստորագրություն	_____ ստորագրություն

Համաձայնագիր թիվ 1

17.02.2022 թ. կնքված թիվ ԿԿ-ԳՀԾՁԲ-22/24 անվտանգության սարքերի տեղադրման ծառայությունների մատուցման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

ք. Երևան 18.02. 2022 թ.

Կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Մ. Խաչատրյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սեկոնետ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Մելիքյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2022 թվականի փետրվարի 17-ին կնքված անվտանգության սարքերի տեղադրման ծառայությունների մատուցման թիվ ԿԿ-ԳՀԾՁԲ-22/24 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով պայմանագրի 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները՝ հաստատել պայմանագրի 1.1 կետով նախատեսված անվտանգության սարքերի տեղադրման ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Ծառայության դիմաց վճարումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (պայմանագրի թիվ 2 հավելված) հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2022 թ.-ի դեկտեմբերի 30-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
Կադաստրի կոմիտե ք. Երևան, Արշակունյաց 7 ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն Հ/Հ 900011030815 ՀՎՀՀ 02534328 Գլխավոր քարտուղար ----------Մ. Խաչատրյան (ստորագրություն) Կ.Տ.	«Սեկոնետ»ՍՊԸ ք. Երևան, Ն. Զարյան 32 «Հայբիզնեսբանկ»ՓԲԸ Հ/Հ 1150004088520100 ՀՎՀՀ 00099207 տնօրեն ----------Տ. Մելիքյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1
17.02.2022 թ. կնքված թիվ ԿԿ-ԳՀԾՁԲ-22/24 պայմանագրի
թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության												
հրավերով նախատես. չ/բ համարը	գնումների պլանով նախատես.միջանցիկ ծածկ. ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում										
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231215/501	Անվտանգության սարքերի տեղադրման ծառայություններ	23220000	23220000	23220000	23220000	23220000	23220000	23220000	23220000	23220000	23220000	23220000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե

ք. Երևան, Արշակունյաց 7

ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն

Հ/Հ 900011030815

ՀՎՀՀ 02534328

Գլխավոր

քարտուղար----------Ս. Խաչատրյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Սեկոնետ»ՍՊԸ
ք. Երևան, Ն. Զարյան 32
«Հայբիզնեսբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1150004088520100
ՀՎՀՀ 00099207

տնօրեն ----------Տ. Սելիքյան

(ստորագրություն)

Կ.Տ.